

«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան Կեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ Երանոսյան Նունե

Ուսումնական հաստատություն Վ. Բագմաբերդի հիմնական դպրոց

ԹԱՎԻՆ 2022

Բովանդակություն

Ներածություն-----	3
Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ-----	4
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են բրեւածին, կոնֆլիկտածին, ամբարեկապատ ընտանիքներ:

Վեճերի ժամանակ զլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ զրգոման օջախ, որը կարող է ընդգրկել ահուելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը: Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

1. Էգոցենտրիկ համակարգ - որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:
2. Այլէտոքցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը:
3. Սոցիոցենտրիկ - հիմքում ընկած է մեկը:

Թեմայի նպատակը: Կոնֆլիկտներն անխուսափելի են անգամ ամենաներդաճնակ հարաբերությունների դեպքում, բայց, ինչպես պարզվում է, վեճերն էլ կարող են բուլտրովին տարբեր հետևանքներ ունենալ. դրանք կարող են դառնալ ավելի մեծ վիրավորանքի ու չհասկացվածության պատճառ, կարող են և դառնալ առաջընթաց ֆայլ դեպի փոխըմբռնում:

Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի

ընթացում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնույթյան կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հանելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության^a բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. «Ընտանիքը հասարակության բջիջն է»: Այսինքն՝ հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ ե՞քրբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն՝ առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ:

Ընտանիքի համար հզոր ժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեկավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

3. Բախման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս երջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հազեցվածության փուլ, կամ ֆադցի երջան:

5. Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս երջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն երջանի հետ: Կարող է ձևավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարածայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խթարել ընտանիքի ամրությունը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Այդ շարքում միշտ էլ վնասորոշ տեղ է զբաղեցրել ֆինանսական խնդիրը: Խնդիրը շուտապես ամենախառակ օրինակների արձանագրությամբ: Այսօր, երբ ընտանիքում ուժեղ սեռի ներկայացուցիչները լիարժեք չեն կարողանում լուծել ընտանեկան սոցիալ-կենցաղային խնդիրները, նույն այդ ընտանիքներում կանանցից շատերը գուզընկերոջից գաղտնի գումարներ են ծախսում իրենց կոսմետիկայի, արդուզարդի ու հագուկապի վրա, իսկ ամուսիններից ոմանք էլ պարտքեր են վերցնում ծանոթներից, ընկերներից, և առանց կանանց իմացության մեծ գումարներ վատնում իրենց հաճույքների վրա:¹

Արդյունքում ծնվում են վեճեր: Իհարկե, կատարյալ կլիներ, եթե ամուսինները հաճույքների վրա իրարից գաղտնի գումարներ վատնելու, իսկ կենցաղային կարիքների վրա ծախսերն արհեստականորեն ուռնացնելու փոխարեն կարողանային ավելի շատ վստահել իրար, փորձել միասնաբար, առանց կոպեկներ թափցնելու, ընտանեկան բյուջեն բաշխել ամսվա սկզբից: Այս պարագայում ոչ միայն նվազագույնի կհասցնեն կենցաղային խնդիրները, այլև ավելի շատ կվստահեն, կհարգեն ու կսիրեն միմյանց:

¹ 1.Է.Գ. Էյդեմիլեր, Վ.Յուստիցկիս, Ընտանիքի հոգեբանություն և հոգեբերապիա, 2002թ.

2.Ս.Ա. Սեդրակյան, «Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը», 2012թ.

Փորձելով խնդրո առարկան ենթարկել հոգեբանական վերլուծության, կտեսնենք, որ նշյալ արատի հետևում թափնված են այլ, ավելի խորիմաստ խնդիրներ:

Բնական է, որ հաճախ երիտասարդ ընտանիքները դժվարություններ են ունենում, երբ տարբեր մանրուհների վրա ծախսերը թույլ չեն տալիս, որպեսզի նրանք լիարժեք վայելեն կյանքը: Բայց ահա, տարիների ընթացքում, երբ և՛ կինը, և՛ ամուսինը իրենց գործունեության ոլորտում հասնում են որոշակի հաջողության, ստանում են պատիվներ, բարձրանում է նաև նրանց աշխատավարձը, ինչը թույլ է տալիս ավելի բարձր ապրել, հանգստանալ թանկարժեք հանգստյան վայրերում, միևնույն է՝ խնդիրները չեն վերանա: Նյութական հնարավորությունների բարձրացման հետ մեկտեղ մեծանում են նաև պահանջմունքները, տվյալ դեպքում՝ ավելի շատ ֆինանսներ շուրջում տեսնել: Սկսում են արդեն հագնել բրենդային հագուստներ, գնել ու հաճախակի փոխել շքեղ ավտոմեքենաներ, թանկարժեք կենցաղային պարագաներ, հաճախել թանկարժեք ռեստորաններ և այլն:

Այսօրվա հանդերձ, նյութական հնարավորությունների անը այդպես էլ չի բավարարում նրանց պահանջմունքները: Նրանք հայտնվում են փակուղու առջև:

Հենց այստեղ է, որ մարդ պետք է իրատեսորեն գնահատի իր հնարավորությունները, ոչ թե ցանկություններին հնազանդ՝ օր-օրի խրվի պարտքերի մեջ, այլ հանուն իր ընտանիքի ու երեխաների, հաստատակամորեն վերջ տա դեպի կործանում տանող բայլերին:

Մի հին հեֆիաթում կինը մշտապես վիճում էր իր ամուսնու հետ: Ամուսինը նրան մի բառ էր ասում, իսկ նա տասը պատասխանում: Եվ այդպես շարունակ: Կինը գնում է կախարհի մոտ՝ խորհրդակցելու: Վերջինս նրան տալիս է ջրով լի մի կուժ. “Այս ջուրը հասարակ չէ, այլ՝ կախարհական: Հենց ամուսինդ սկսի վիճել, նրան պատասխանելու փոխարեն ջուրն առ բերանդ և պահիր այնքան, մինչև նա հանդարտվի”: Կինը լսում է նրան: Այդ օրվանից նրանք համերաշխ են ապրում: Հեֆիաթի խորհուրդն այն է, որ կողակցի հետ վիճել պետք չէ: Բայց արդյո՞ք սրա հետ համամիտ են ժամանակակից մասնագետները:

-Իմ կարծիքով բացարձակ համերաշխ ամուսիններ չեն լինում: Նույնիսկ ամենաներդաճնակ, միմյանց սիրող զույգերը ժամանակ առ ժամանակ միմյանց հետ վիճում են, սակայն դա չի նշանակում թե անհաջող ընտանիք է կազմվել, ընդհակառակը նրանց զգացմունքները կենդանի են, երբ այդ հարաբերություններն անընդհատ զարգանում են,- սա բժշկուհի Տատյան Պուշկարևայի կարծիքն է:

Տարածայնություններից խուսափելի կարելի միայն այն պարզ պատճառով, որ մարդն ի ձեռն կոնֆլիկտային է: Որքան էլ զույգերը միմյանց սիրեն, անպայման մի հարցում նրանք տարածայնություն կունենան: Մի խոսքով, խոսակցություններից չի կարելի խուսափել:

Բարդ կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորվում է յուրաքանչյուր անհատի ներաճխարհը: Եթե մեկը կատարվածը բուռն, զգացմունքային է ընդունում, մյուսը ցուցաբերում է համբերատարություն և դիվանագիտություն՝ փորձելով հարթել այդ ամենը, երրորդն այդ ամենին հումորով է վերաբերվում:

Կոնֆլիկտային իրադրությունները կախված են մարդու տաքարյունությունից, բնավորությունից, սովորություններից, դաստիարակությունից և կյանքի փորձից: Կան այնպիսի ընտանիքներ, որտեղ ամուսինները մշտապես վիճում են, այդուհանդերձ, նրանք իրենց շատ լավ են զգում: Հետաքրքրությունների բախումը հնարավորություն է ընձեռում խոսել, ստանալ էմոցիոնալ լիցքավորում և ավելի լավ հասկանալ մեկմեկու, արդյունքում՝ ավելի մտերմանալ: Գաղտնիքը հետևյալն է, այստեղ վեճը թելադրված է գուզընկերոջ նկատմամբ սիրո արտահայտմամբ: Բոլորին քաջ հայտնի է, որ սիրո մեջ միշտ էլ կա ատելության տարր: Մենք սիրում ենք և հարգում, սակայն միաժամանակ ատում ենք նրա բնավորության որոշ գծերը կամ հակումները, որոնք նրան խանգարում են արժանվույնս ներկայանալ: Օրինակ՝ ծուլությունը, քափփվածությունը, հաստատակամությունը, ոգելից խմիչքների նկատմամբ հակումը և այլն: Իհարկե, յուրաքանչյուր կոնֆլիկտ իր հետ բերում է փլուզիչ ուժ, սակայն եթե այն թելադրված է հոգածությամբ, օգնելու պատրաստակամությամբ, ապա հարաբերությունները չեն փլուզվի և կդառնան ավելի պարզ և հասկանալի: Դա նման է ամպրոպին պատրաստ բնությանը, երբ երկինքը ծածկվում է ամպերով, և այդ ժամանակ շատերն են իրանց անհանգիստ զգում: Մթնոլորտը դառնում է լարված և ճնշող: Սակայն երբ ամպրոպում է, վերջապես հեղում է անձրևը, բոլորը սկսում են հանգիստ շունչ փռել: Մասնագետների կարծիքով, ավելի հաճախ ամուսինները ներկայացնում են վարքագծի այն կանոնները, որոնք դրսևորվել են մանուկ հասակում: Եթե ծնողները հաճախակի էին վիճում և այդ հարաբերությունները պարզաբանում էին բարձրաձայն, միանգամայն հնարավոր է, որ երեխան մեծանալով դրսևորի այդ վարքագիծը: Եթե ծնողները հաճախակի էին վիճում և այդ հարաբերությունները պարզաբանում էին բարձրաձայն, միանգամայն հնարավոր է, որ երեխան մեծանալով դրսևորի այդ վարքագիծը: Եթե ընտանիքում ընդունված է փոխզիջումը և վեճերից խուսափելը, ապա հարաբերությունները միանգամայն այլ կլինեն:²

Ըստ ավանդույթի՝ կոնֆլիկտային են համատեղ կյանքի առաջին տարիները: Այդ շրջանում վեճեր կարող են ծագել նույնիսկ աննշան բաներից: Վեճի առարկա կարող են լինել կենցաղային սովորությունները: Այդ ժամանակահատվածում ծագած խնդիրները պայմանավորված են բնավորությունների փոխհարմարեցմամբ: Աստիճանաբար գույզերը սովորում են միմյանց, ընտրում միմյանց համարընդունելի վարքագիծ: Այժմ առաջնային են դառնում այլ խնդիրներ:

² Յ.Վ.Ի. Ջաղեպի, «Ընտանիքի հոգեբանություն», 2003թ.

4.Ս. Սեդրակյան, «Ընտանիքի հոգեբանություն», 2008թ.

Վիճակագրության համաձայն՝ ավելի հաճախ տարածայնությունների առիթ են դառնում տնտեսական խնդիրները: Ընդ որում դա որևէ կապ չունի բարեկեցության աստիճանի հետ: Թե ապահովված, թե չունևոր ընտանիքներում նույն մոլուցիկով վիճում են, ինչպես՝ ավելի ճիշտ ծախսել վաստակած միջոցները, ինչի՞ն տալ նախապատվություն և ինչի՞ն հաշվին տնտեսել: Եվս մեկ արգելք. դա երեխաների դաստիարակության հարցն է: Նույնիսկ համերաժիս գույգերը դժվարանում են նման բարդ հարցերում գտնել փոխզիջման եզրեր:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև: Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)

գ) նեխի կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում): Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Մենք անցկացրել ենք Յու. Ալեքինայի մեթոդիկան, որը բույլ է տալիս առանձնացնել 8 գործոն, որոնք առաջացնում են միջանձնային կոնֆլիկտներ ամուսնական գույգերի միջև:

1. Խնդիրներ հարազատների և ընկերական հարաբերությունների միջև:

2. Հարցեր, որոնք կապված են երեխաների դաստիարակության հետ:

3. Ամուսնական գույգերի մոտ ավտորիտար ուժի ձգտում:

4. Դերային ակնկալիքների խախտումները:
5. Վարքագծի անհամապատասխանությունը:
6. Ամուսնական գույքերի դոմինանտության դրսևորումները:
7. Ամուսնական գույքերի խանդի դրսևորումները:
8. Հակասական հարաբերությունները գումարի նկատմամբ:

Անձի վարքագիծը կոնֆլիկտային իրավիճակներում բնութագրելու համար ընտրված են ակտիվ կամ պասիվ կոնֆլիկտային իրավիճակներ, համաձայնություն կամ անհամաձայնություն ամուսնական գույքերի փոխգործունեության մեջ: Մեթոդիկան իրենից ներկայացնում է 32 վերբալ բնութագրվող ընտանեկան փոխազդեցության իրավիճակներ, որոնք կրում են կոնֆլիկտային բնույթ: Փորձարկվողին առաջարկվում է հետևյալ հակազդումները՝ ակտիվ կամ պասիվ, համաձայնություն կամ անհամաձայնություն գույքերի միջև: Աղյուսակը այնպես է կազմված, որ սյուներից մեկը՝ ձախը, բաղկացած է ակտիվ արտահայտված անհամաձայնություն, այնուհետև բացասական արտահայտված համաձայնությունը, և վերջապես հաջորդ սյունակը՝ աջը, բաղկացած է ակտիվ արտահայտված համաձայնությունից: Աղյուսակի նշանակությունը վերագրվում է թվային համարժեքությանը համապատասխան՝ -2 մինչև +2: Խնդրում ենք ընտրել ստորև ներկայացված այն տարբերակը, որը որոշ չափով մոտ է նրան, թե ինչպես եք դուք ձեզ դրսևորում նման իրավիճակներում: Առանձին թղթի վրա ընտրեք այն թվերը, որոնք համապատասխանում են ձեզ:

Մարդն իր ողջ կյանքի ընթացքում չի կարող զերծ մնալ կոնֆլիկտներից: Քանի դեռ բախում է նրա զարկերակը, քանի դեռ կա զարգացում, փոփոխություն, մտապես կլինի նաև կոնֆլիկտ, բախում, հակասություն: Բախումներն անկասկած, լավ բանի չեն հանգեցնում, խան-զարում են ընդհանուր գործին, խոչընդոտում դրա իրականացման փոխհամաձայնեցված ջանքերը, խաթարում են մարդկային փոխհարաբերությունները, առաջացնում լարվածություն և ցնցումներ, որոնք բացասաբար են անդրադառնում մարդու առողջության, հոգեկան առ-խաթի վրա: Ուստի շատ մարդիկ հիմնականում խուսափում և վախենում են բախումներից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հակամարտող կողմերը չեն սիրում 'կոնֆլիկտ' անվանել այն, ինչ տեղի է ունենում իրենց միջև: Նրանք նշում են. 'Մենք չենք վիճում, պարզապես մեր կարծիքները չեն համընկնում': Կարելի է ենթադրել, որ գոյություն ունեն կոնֆլիկտի դրսևորման տարբեր ձևեր: Սակայն կոնֆլիկտը չի կարող ունենալ միայն բացասական հետևանքներ: Ինչպես ասում են. 'Չկա չարիք առանց բարիքի': Հաշտ ու հանգիստ ապրելը ողջունելի է, բայց կյանքն առանց փոփոխությունների, զարգացման շատ ձանձրալի է: Իսկ վերջիններս առաջանում են հնի ու նորի, վատի ու լավի, նպատակների, հետաքրքրությունների բախման հետևանքով: Հետևաբար երբեմն ընդունելի է կոնֆլիկտը, պարզապես անհրաժեշտ է իմանալ հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս կանխել կոնֆլիկտը. եթե այն սպառնում է խաղաղությանն ու բարեկամական հարաբերություններին, կյանքին և առողջությանը
- Ի՞նչ վարձագիծ դրսևորել կոնֆլիկտի ընթացքում, որպեսզի թուլացնենք լարումը և դրա վատ հետևանքները
- Ինչպե՞ս հանգուցել կոնֆլիկտը. ըրպեսզի այն նվազագույն կորուստներ պատճառի կամ հանգեցնի բարեհաջող հաղթանակի:

Այս հարցերի պատասխանը կարող է տալ մի գիտություն, որը կոչվում է կոնֆլիկտ-տաքանություն: Այն ուսումնասիրում է կոնֆլիկտի առաջացման պատճառները, տեսակները, դրսևորման տեսակները և կարգավորելու եղանակները: Այն որպես գիտություն առաջացել է 20-րդ դարում: Մտածողների մի մասը (Խիլոն, Պիտտակ) դեմ էր կոնֆլիկտ բառի գործածությունը, քանի որ ֆենադատում էր մարդկանց մեջ ծագող հակամարտությունները և վեճերը՝ խորհուրդ տալով խուսափել դրանցից:

Այս հարցի վերաբերյալ հնչել են շատ տարբեր կարծիքներ: Հոգեվարլուծաբան Զիգմունդ Ֆրեյդը ստեղծել է մարդկային կոնֆլիկտաբանության առաջին կոնցեպտ-ցիաներից մեկը: Նա հիմնականում զբաղվել է միջանձնային կոնֆլիկտներով և ցույց տվել միջանձնային հարաբերությունների վատթարացման պատճառների փնտրման անհրաժեշտությունը անգիտակցական ոլորտում: Այլերը միկրոմիջավայրի հետ անձի կոնֆլիկտի բովանդակությունը տեսնում էր անհատի փորձերում, երբ նա փորձում էր ձեռքբերել անլիարժեքության զգացումից և դոմինանտությունից մեկը մյուսի նկատմամբ: Կ. Հորնիի կարծիքով կոնֆլիկտի պատճառ է համարվում անհատի և նրա շրջապատող միջավայրի միջև հոգատարության բացակայությունը(առաջին հերթին ծնողների): Ըստ Է. Ֆրոմի՝ կոնֆլիկտը առաջանում է, քանի որ մարդը չի կարողանում հասարակության մեջ ռեալիզացնել անձնական, անհատական ձգտումներն ու պահանջմունքները: Անգլոամերիկացի հոգեբան Մակ Դուգանը գտնում է, որ կոնֆլիկտը հասարակության մեջ անխուսափելի է, քանի որ մարդկանց բնորոշ են սոցիալական բնագոյները վախի, ինֆենահամոզման ձևով, որոնք փոխանցվում են ժառանգաբար: Ավստրիացի հոգեբան Կորենցը կարծում էր, որ սոցիալական կոնֆլիկտի գլխավոր պատճառն անհատի և ամբոթի ագրեսիվությունն է: Երմանացի հոգեբան Կուրտ Լևինը մշակեց վարքի դինամիկայի համակարգի կոնցեպցիաները: Նա գտնում էր, որ այդ վարքի դինամիկան խախտվում է, երբ խախտվում է հավասարակշռությունը անհատի և միջավայրի միջև: Այն դրսևորվում է կոնֆլիկտի տեսքով: Խմբի մեջ լիդերի գործողությունների անբարենպաստ ոճը կարող է դառնալ այս բալանսի խախտման պատճառ: Մորենոն սոցիոմետրիկ տե-սության համաձայն գտնում էր, որ կոնֆլիկտները առաջանում են համաձայն մարդկանց միջև հուզական հարաբերությունների, իսկ

միջանձնային և միջխմբային կոնֆլիկտները կարող են լուծվել միայն մարդկանց վերադասավորության հանապարհով՝ իրենց էմոցիոնալ նախապատվության համապատասխան:

Այսպիսով, կոնֆլիկտի առաջացման պատճառ հանդիսանում են ոչ թե միայն կենսաբանական, սոցիալական կամ դաստիարակչական գործոններն առանձին-առանձին, այլ դրանց համատեղ ազդեցությունը:

1. Կոնֆլիկտի կառուցվածքը – կառուցվածք ասելով՝ հասկանում ենք նրա մասերի, տարրերի և կապերի ամբողջությունը, դրանց հարաբերությունները, որոնք ապահովում են նրա ամբողջականությունը: Կոնֆլիկտային փոխազդեցության հիմնական տարրերն են

ա) կոնֆլիկտի օբյեկտը, ամեն մի կոնֆլիկտ իր պատճառն ունի և ծագում է երեք պահանջմունք բավարարելու համար: Որպես կոնֆլիկտի օբյեկտ՝ հանդես են գալիս սոցիալական, հոգևոր և նյութական արժեքները,

բ) կոնֆլիկտի մասնակիցները – կարող են լինել առանձին անհատներ, խմբեր, կազմակերպություններ, ազգեր: Նրանք կոչվում են ընդդիմադիր կողմեր կամ հակառակորդներ(օպոնենտներ): Ըստ այդմ կոնֆլիկտները բաժանվում են ներանձնային, միջանձնային, անհատ- խումբ, խումբ-խումբ,

գ) կոնֆլիկտի սոցիալական միջավայրը, պայմանները – կոնֆլիկտի զարգացման մեջ կարևոր դեր ունեն սոցիալ- հոգեբանական պայմանները, որոնցում ծավալվում է այն, այսինքն այն հողը, որի վրա ծագում և ընթանում է կոնֆլիկտը: Այն իր մեջ ներառում է կոնֆլիկտող կողմերի ոչ միայն մերձավոր, այլև հեռավոր, ընդարձակ շրջապատը (նաև սոցիալական մեծ ազգային խմբերը և ամբողջ հասարակությունը):

դ) կոնֆլիկտի սուբյեկտիվ ընկալումը և նրա անձնային տարրերը – կարևոր է նաև սուբյեկտիվ ընկալումը կամ կոնֆլիկտի պատկերացումը, որը ստեղծվում է տվյալ կոնֆլիկտային իրավիճակի գործող անձանց կամ խմբերի միջև: Այս պատկերացումը կամ ընկալումը պարտադիր չէ, որ համապատասխանի իրերի ճիշտ դրությանը, իրական իրավիճակին:³

Նրակացություն

Դերերը կատարելիս մարդիկ կարող են ապրել դերային կոնֆլիկտ և դերային լարվածություն: Առաջինն առաջանում է այն դեպքում, երբ անձի կողմից կատարվող դերերը միաժամանակ ներկայացնում են հակադիր

³ 1.Է.Գ. Էյդեմիլեր, Վ.Յուստիցկիս, Ընտանիքի հոգեբանություն և հոգեթերապիա, 2002թ.

պահանջներ: Դերային լարվածություն առաջանում է այն դեպքում, երբ նույն դերը անձին միաժամանակ ներկայացնում է հակադիր պահանջներ:

Այստեղ խոսքը գնում է ունիկալ սոցիալական փորձի, ունիկալ ենթամշակույթի մասին: Հետևաբար կենսաբանական ժառանգականությունը չի կարող լիովին ստեղծել մարդուն, քանի որ ոչ մշակույթը, ոչ սոցիալական փորձը չեն փոխանցվում գեներով: Սակայն կենսաբանական գործոնը հարկ է հաշվի առնել, քանի որ այն առաջինը՝ ստեղծում է սահմանափակումներ սոցիալական ընդհարությունների համար(երեխայի անպաշտպանությունը, երկար ջրի տակ գտնվելու անկարողությունը, կենսաբանական պահանջմունքների առկայությունը և այլն), երկրորդը՝ կենսաբանական գործոնի շնորհիվ առաջանում է խառնվածքների, բնավորությունների, կարողությունների անսահման զանազանություն, որոնք յուրաքանչյուր մարդկային անձից ստեղծում են անհատականություն, այսինքն անկրկնելի, ունիկալ արարած:

Բարդ կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորվում է յուրաքանչյուր անհատի ներաշխարհը: Եթե մեկը կատարվածը բուռն, զգացմունքային է ընդունում, մյուսը ցուցաբերում է համբերատարություն և դիվանագիտություն՝ փորձելով հարթել այդ ամենը, երրորդն այդ ամենին հումորով է վերաբերվում:

Կոնֆլիկտային իրադրությունները կախված են մարդու տափարյունությունից, բնավորությունից, սովորություններից, դաստիարակությունից և կյանքի փորձից: Կան այնպիսի ընտանիքներ, որտեղ ամուսինները մշտապես վիճում են, այդուհանդերձ, նրանք իրենց շատ լավ են զգում: Հետաքրքրությունների բախումը հնարավորություն է ընձեռում խոսել, ստանալ էմոցիոնալ լիցքավորում և ավելի լավ հասկանալ մեկմեկու, արդյունքում՝ ավելի մտերմանալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Է.Գ. Էյդեմիլլեր, Վ.Յուստիցկիս, Ընտանիքի հոգեբանություն և հոգեթերապիա, 2002թ.
2. Ս.Ա. Սեդրակյան, «Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը», 2012թ.
3. Վ.Ի. Զացեպին, «Ընտանիքի հոգեբանություն», 2003թ.
4. Ս. Սեդրակյան, «Ընտանիքի հոգեբանություն», 2008թ.